ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1953 Общественные науки

ՎՃՌԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ԾԱՎԱԼԵԼ ԹՇՆԱՄԱԿԱՆ ԻԴԵՈԼՈԳԻԱՅԻ ԱԱԵՆ ՏԵՍԱԿԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի 19-րդ համագումարը նոր ու պատասխանատու խնդիրներ դրեց իդեոլոգիական բնագավառում աշխատողների առաջ։ Տալով սոցիալիզմից կոմունիզմին անցնելու հոյակապ ծրագիրը, համագումարն ընդգծեց իդեոլոգիական աշխատանքի կարևոր դերը՝ այդ ծրագրի կենսագործման խնդրում։

Համագումարը պարտիական կազմակերպություններից պահանջեց վերջ տալ գաղափարական աշխատանքի թերագնահատմանը, անդուլ պայքար ծավալել թշնամական իդեոլոգիայի ամեն մի արտահայտության դեմ, մերկացնել մարքսիզմին խորթ գաղափարախոսության բոլոր դրսևորումները։

Համագումարում ընկ. Մալենկովն ասաց. «Մեր սովետական հասարակության մեջ չկա և չի կարող դասակարգային բազա լինել բուրժուական իդեոլոգիայի տիրապետության համար։ Մեզ մոտ տիրապետում է սոցիալիստական իդեոլոգիան, որի անխախտ հիմքն է կազմում մարքսիզմ-լենինիզմը։ Բայց մեզ մոտ դեռևս պահպանվել են բուրժուական իդեոլոգիայի մնացորդները, մասնավոր սեփականատիրական հոգեբանության և մորալի մնացուկները։ Այդ մնացուկները իրենք իրենց չեն մեռնում, նրանք շատ կենսունակ են, կարող են աճել և նրանց դեմ պետք է վճռական պայքար մղել»։

Սովետահայ պատմագիտության ու գրականագիտության մեջ նույնպես կան գաղափարական, մեթոդոլոգիական լուրջ սխալներ, որոնք արդյունք են մարդկանց գիտակցության մեջ բուրժուական իդեոլոգիայի մնացուկների։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի 16-րդ համագումարում տված իր զեկուցման մեջ ընկ. Դր. Հարությունյանը ասաց, որ Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի «առանձին աշխատողներ հայ գրականության պատմության մի քանի հարցերի գնահատման մեջ կանգնած են «միասնական հոսանքի» թեորիայի դիրքերում։ Գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատող Խորեն Սարգսյանը հայ գրականության պատմության դասագրքի ներածության մեջ աշխատել է ամեն կերպ մեղմացնել այն արմատական սարքերությունները, որոնք գոյություն են ունեցել Մ. Նալբանդյանի ռևոլյուցիոն դեմոկրատիզմի և Ստ. Նազարյանցի բուրժուական լիբերալիզմի միջև, այդ ժամանակաշրջանի հայ գրականության բոլոր հիմնական հարցերը հանդեցնելով ազգային ազատագրական շարժման, լուծության մատնելով այն հարցերը, որոնք կապված են եղել դասակարգային պայքարի և առանձին խմբերի ու հասարակական հոսանքների միջև մղվող պայքարի հետ»։

Ընկ. Դր. Հարությունյանը համագումարում նշեց, որ գաղափարական նման սխալներ թույլ են տվել նաև առանձին պատմաբաններ ու փիլիսոփաներ, որոնց աշխատությունների և հայացքների մեջ «դեռևս մերկացված ու մինչև վերջը հաղթահարված չեն հայ հին, բուրժուա-կղերական պատմագրության բուրժուա-նացիոնալիստական կոնցեպցիաները»։

Ընկ. Գր. Հարությունյանը սովետահայ պատմագրության ու գրականագիտության բնագավառում եղած գաղափարական սխալներին անդրադարձավ ՍՄԿՊ-ի 19-րդ համագումարում արտասանած ճառում և ասաց. «Որոշ հեղինակներ հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժումը դիտում են դասակարգային պայքարից դուրս, ռևոլյուցիոն դեմոկրատներ, ազգային հերոսներ հայտարարելով ցարիզմի դեմ մղված պայքարի բոլոր մասնակիցներին, այդ թվում բուրժուական լիբերալներին և բուրժուական նացիոնալիստներին»։

Մեր պատմաբանների և գրականագետների աշխատություններում նկատվող վերոհիշյալ սխալներն արդյունք են հայ լիբերալ և կղերա-պահպանողական պատմագրության տրադիցիաների անբավարար հաղթահարման։

Հայտնի է, որ դասակարգային պայքարից սարսափող բուրժուազիայի իդեոլոգները իրենց գործունեությունը ամբողջովին ուղղել են այն բանին, որպեսզի հայ հասարակական կյանքը ներկայացնեն դասակարգային հակասություններից զերծ մի ազգային ամբողջություն, որին իբր թե հատուկ չեն եղել ներքին սոցիալական հակամարտությունները, որ՝ հայ ժողովուրդը ունեցել է միայն մի թշնամի՝ արտաքին թշնամին։

Այս ռեակցիոն և հակաժողովրդական քարոզն է ընկած 19-րդ դարի 50—60-ական թվականների հայ լիբերալների գրական և հասարակական ամբողջ գործունեության հիմքում, լիբերալներ, որոնք իրենց դասակարգային շահերը ներկայացնում էին որպես ընդհանուրի շահ։ «Նրանք,— ասում է Լենինը ռուս լիբերալների մասին,— խոսում էին ժողովրդի նկատմամբ տածելիք սիրո մասին, հավասարության ու ընդհանուր երջանկության մասին»։

Բուրժուազիայի վարքագծի սքանչելի բնութագրումը տվել է ընկեր Ստալինը։ «Ճնշված ազգի ամեն կողմից նեղված բուրժուազիան,— գրում է ընկեր Ստալինը,— բնականաբար շարժվել է սկսում։ Նա «հայրենի ներքնախավերին» է դիմում և սկսում է աղաղակել «հայրենիքի» մասին, իր սեփական գործը հրամցնելով համաժողովրդական գործի տեղ։ Նա իր համար բանակ է հավաքագրում «հայրենակիցներից» հանուն... «հայրենիքի» շահերի։ Եվ «ներքնախավերը» միշտ չէ, որ անտարբեր են մնում դեպի կոչերը, հավաքվելով նրա դրոշի շուրջը. վերևից եկող ռեպրեսիաները նրանց էլ են դիպչում, անբավականություն առաջ բերելով նրանց մեջ։

Այսպես է սկսվում ազգային շարժումը»։

Լենինի և Ստալինի այս գնահատումները նույնությամբ վերաբերում են հայ բուրժուազիային և հայ ազգային-ազատագրական շարժման սկզբնավորմանը։ Հայ բուրժուազիան անթիվ անհամար ֆրազներ է շաղ տվել ժողովրդի ազատության, ազգի միավորման, խղճի և այլ կարգի ազատությունների մասին, իր շահը ներկայացնելով որպես հայ ժողովրդի համազգային շահը։

Իրենց հրապարակախոսության մեջ քարոզելով դասակարգերի համերաշխություն, փորձելով հանդերձ ցույց տալ, որ հայ իրականության հատուկ չեն դասակարգային հակամարտությունները, իրականում հայ լիբերալները երկյուղով էին նկատում 50—60-ական թվականներից աշխուժացող դեմոկրատական և ռևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքների ազդեցության ուժեղացումը մասսաների վրա։

Հայ լիբերալները՝ «համազգային» միասնական ազգության վերաբերյալ իրենց քարոզներին զուգակցում էին ռևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքի

գործունեության անտեսումն ու հայ պրոգրեսիվ ամբողջ կուլտուրայի նույնացումը բուրժուական կուլտուրային։

50—60-ական թվականներին թմբկահարված «միասնական» «ազգային շահերի» թեորիան իր նոր դրսևորումն ստացավ 1877—78 թթ. ռուս-թյուրքական պատերազմի շրջանում և պատերազմից հետո։ Հայ բուրժուազիան, օգտագործելով հայ ժողովրդի ազատագրական ձգտումները, ազգային ազատագրական շարժումը հակադրում էր դասակարգային պայքարին։

Այս նոր շրջանում հայ բուրժուազիայի գաղափարախոսներն էին Դր. Արծրունին, Բաֆֆին, Պատկանյանը և ուրիշները, որոնց նացիոնալիստական գաղափարախոսությունը հետագայում որդեգրեցին բուրժուա-նացիոնալիստական հայ քաղաքական պարտիաները։

Նացիոնալիստական վայրագ տեռորին ու պրոպագանդային հակառակ 20-րդ դարի սկզբից օրեց-օր խտանում էր Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի շարքերը։

Անդրկովկասում՝ Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում ընկեր Ստալինի ղեկավարությամբ ստեղծվում էին սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, որոնք գլխավորում էին բանվոր դասակարգի քաղաքական պայքարը ցարիզմի և բուրժուազիայի դեմ։ Ազգային հարցը դառնում էր պրոլետարական ռևոլյուցիայի բաղկացուցիչ մասը։ Անդրկովկասի ժողովուրդների ազատագրության պայքարի ղեկավարությունը իր ձեռքն էր վերցրել մեծ Ստալինը։

Բուրժուա-նացիոնալիստական պարտիաները փորձում էին արգելակել դասակարգային ինքնագիտակցության եկած հայ պրոլետարիատի համախմբումն ու համերաշխությունը՝ մյուս ազգություններին պատկանող պրոլետարների հետ։

Պատահական չէ, որ այս շրջանին է զուգադիպում հայ բուրժուա-նացիոնալիստական պատմագրության ներկայացուցիչներից մեկը՝ Լեոյի պատմագրական և գրականագիտական գործունեության ակտիվացումը։

Այդ թվականներին Լեոն շտապեց միմյանց ետևից լույս ընծայել մի շարք աշխատություններ, որոնք սանձազերծ ներբողներ էին հայ լիբերալիզմի պարագլուխներ Ստ. Նազարյանցի, Դր. Արծրունու, Բաֆֆու և ուրիշների հասցեին։ Այդ աշխատություններում Լեոն միաժամանակ, ամեն կերպ ձգտում էր նսեմացնել դեմոկրատական և ռևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքների դերը հայ հասարակական կյանքում։

«Համազգային շարժման» ռեակցիոն, հակաժողովրդական գաղափարն էր ընկած ոչ միայն Լեոյի վերոհիշյալ աշխատությունների հիմքում, այլև բուրժուա-նացիոնալիստական բոլոր գրողների ու հրապարակախոսների ստեղծագործության հիմքում, հայ նացիոնալիստական պարտիաների ծրագրի հիմքում, պարտիաներ, որոնք պրոլետարիատի դասակարգային պայքարի թեորիային հակադրում էին դասակարգերի համերաշխության, ազգային ազատագրական շարժման մեջ «միասնական հոսանքի» նացիոնալիստական թեորիան։ Նացիոնալիստական այդ պարտիաներն ու նրանց գաղափարախոսները ձգտում էին հայ ժողովրդի ազատագրական պայքարը կտրել համառուսաստանյան ռևոլյուցիոն շարժումից, հայ ժողովրդի բախտը կապել արևմտաևրոպական իմպերիալիստական պետությունների գաղութային քաղաքականության հետ։

Հայ բուրժուազիայի կողմից թմբկահարվող «միասնական հոսանքի», «ազգային համերաշխության», «համազգային շահի» գաղափարները սուր ու ոչնչացնող քննադատության ենթարկեց ընկեր Ստալինը իր «Ինչպես է հասկանում սոցիալ-դեմոկրատիան ազգային հարցը» նշանավոր աշխատության մեջ։ Մերկացնելով բունդի հետքերով ընթացող հայ նացիոնալ-ֆեդերալիստական տարրերից բաղկացած «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության» «մանիֆեստի» նացիոնալիստական էությունը, ընկեր Ստալինը ցույց էր տալիս, որ այդ կազմակերպությունը ոչինչ չունի հայ պրոլետարիատի շահերի հետ։ «Կարո՞ղ է արդյոք մարտնչող հայ պրոլետարիատը սահմանափակվել «հայ հասարակական միտքը որոշելով», արդյոք նա պարտավոր չէ՞ առաջ գնալու, պայքար հայտարարելու այդ՝ մինչև ոսկորների ծուծը բուրժուական՝ «հասարակական մտքին» և ռևոլյուցիոն ոգի ներշնչելու նրան», ասում էր ընկեր Ստալինը։

Ընկեր Ստալինը, պատասխանելով «հայ ցեղի», «հայ ազգության» միասնականության մասին խոսող նացիոնալիստներին, որոնք ամեն կերպ ձգտում էին պատնեշել հայ պրոլետարիատին ռուս և մյուս ժողովուրդների պրոլետարիատներից, գրում էր. «Մի՞թե հայ պրոլետարիատը կարող է «իր ցեղի հարազատ որդին» լինել, երբ այդ ցեղի մի մասը՝ հայ բուրժուազիան սարդի նման ծծում է նրա արյունը, իսկ մյուս մասը՝ հայ հոգևորականությունը՝ բացի նրանից, որ ծծում է բանվորների արյունը, սիստեմատիկորեն այլասերում է նրա գիտակցությունը։ Այս բոլոր հարցերը պարզ են ու անխուսափելի, եթե գործին դասակարգային պայքարի տեսակետից նայենք»։

Ընկեր Ստալինի հավատարիմ աշակերտներ և զինակիցներ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ա. Միկոյանը սկզբունքային և անողոք պայքար ծավալեցին բուրժուա-նացիոնալիստական պարտիաների և նրանց գաղափարախոսների դեմ, նրանց բուրժուական-նացիոնալիզմին հակադրելով պրոլետարական ինտերնացիոնալիզմը, բոլոր ազգությունների աշխատավորների մարտական համերաշխությունը, ազգային միջնորմների ոչնչացումը։ Նրանք հայ ժողովրդի ազատագրական պայքարը կապում էին ռուսական պրոլետարիատի ռևոլյուցիոն շարժման հետ, որը միայն կարող էր բերել և իրոք բերեց հայ ժողովրդին սոցիալական և ազգային ազատագրություն, իրագործելով նրա դարավոր իղձերն ու ձգտումները։

* * *

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո բուրժուա-նացիոնալիստական և սպեցիֆիկյան կոնցեպցիաները շարունակեցին հանդես գալ հատկապես Լեոյի և Աշ. Հովհաննիսյանի աշխատություններում։ Նրանք մարքսիստական ֆրազեոլոգիայով սքողելով իրենց հակագիտական անընդունելի տեսակետները, փորձում էին վերակենդանացնել լիբերալ պատմագրության կոնցեպցիաները 19-րդ դարի հայ հասարակական հոսանքների գնահատման վերաբերյալ։ Աշ. Հովհաննիսյանը փորձում էր Նալբանդյանին, առհասարակ ռևոլյուցիոն դեմոկրատներին, նույնացնել լիբերալների հետ, դրանով ըստ էության ժխտելով ռևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքի գոյությունը հայ իրականության մեջ։

Սովետահայ որոշ պատմաբաններ և գրականագետներ, փոխանակ մերկացնելու այդ կոնցեպցիաների հակամարքսիստական էությունը և ստեղծելու հայ ժողովրդի գիտական, մարքսիստական պատմությունը, անքննադատ միմյանց ետևից հրատարակեցին Լենոյի՝ նացիոնալիստական դիրքերից գրված աշխատությունները, որոնք իրենց բացասական ազդեցությունը ունեցան որոշ պատմաբանների և գրականագետների վրա։

Ս. Նալբանդյանի գրական ժառանգությունը «միասնական հոսանքի» դիրքերից է քննության առնում պրոֆ. Վ. Ռշտունին, որը ամեն կերպ ճգնում է ապացուցել այն հակագիտական տեսակետը, թե իբր Նալբանդյանը իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ ոչ թե առաջադրում է ագրարային հարցի ռևոլյուցիոն լուծում, այլ պահանջում է ռեֆորմներ, այլ խոսքով, կանգնում է լիբերալների հետ նույն շարքերում։

Լենոյի բուրժուա-նացիոնալիստական կոնցեպցիայի որոշակի ազդեցությունը մենք գտնում ենք պրոֆ. պրոֆ. Աբ. Հովհաննիսյանի, Վ. Պարսամյանի և Մ. Ներսիսյանի որոշ աշխատություններում։

Պրոֆ. Աբգար Հովհաննիսյանը 1947 թ. լույս ընծայած իր «Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումը 18-րդ դարի 80-ական թվականներին» գրքում թույլ է տվել մեթոդոլոգիական, գաղափարական մի շարք լուրջ սխալներ։ Տուրք տալով բուրժուական-նացիոնալիստական պատմագրության կոնցեպցիային, նա անդրկովկասյան ժողովուրդներին ըստ կրոնական հատկանիշի բաժանել է քրիստոնեական և մուսուլմանական հատվածների և ըստ էության զարգացրել նացիոնալիստական տեսակետ՝ վրաց, ադրբեջանական և հայ ժողովուրդների ազատագրական շարժումների գնահատման գործում։ «Խեղաթյուրելով պատմական ճշմարտությունը,— իրավացիորեն գրում է «Պրավդան»,— նա ամեն կերպ լռության է մատնել ադրբեջանական ժողովրդի ձգտումը դեպի ռուս ժողովուրդը, նրա ձգտումը՝ ռուս ժողովրդի օգնությամբ ազատագրվելու օտարերկրյա լծից։ Ավելին. առանձին խաների պրոթյուրքական օրիենտացիան հեղինակը վերագրել է առհասարակ ամբողջ ադրբեջանական ժողովրդին»։

Լենոյի պատմագիտական հայացքների ազդեցությունը նկատելի է Աբ. Հովհաննիսյանի նաև մյուս աշխատություններում, մասնավորապես «Հովսեփ Էմին» գրքում։

Պրոֆ. Պարսամյանը, խոսելով հնդկահայ բուրժուազիայի հասարակական գործունեության մասին, Մադրասում ծավալված բուրժուական կոնստիտուցիոն շարժումը դիտում է, որպես դեմոկրատական մի շարժում։

Անտեսելով պատմական այն ճշմարտությունը, որ Մադրասի խմբակի գործունեության հիմքում երբեք էլ չեն եղել դեմոկրատական գաղափարներ, ընդհակառակը, ուժեղ կերպով արտահայտվել է նացիոնալիզմը, պրոֆ. Վ. Պարսամյանը գրում է. «Ավելի, քան իր ժամանակին մեկ ուրիշը, մոտ կանգնելով հայ դեմոկրատիային, այս հոսանքի ծրագրերում ավելի հարազատորեն էին արտահայտում այդ դեմոկրատիայի շահերն ու ձգտումները»։

Ուշագրավ փաստ է, որ հայ աշխատավորական մասսաները ամենևին էլ չեն խաբվել և խանդավառվել այդ խմբակի բուրժուական աղմուկ աղաղակից։ Պրոֆ. Պարսամյանը փոխանակ այդ երևույթը բացատրելու աշխատավորների դասակարգային վերաբերմունքով, անտեղի մեղադրում է նրանց՝ «քաղաքական պասսիվության» մեջ։

Մաղրասի խմբակի գործունեությունը նույն լիբերալ դիրքերից է գնահատել և պրոֆ. Մ. Ներսիսյանը, որը Շահամիրյանի խմբակի հրատարակություններից մեկը՝ «Նոր տետրակ»-ը անվերապահորեն համարում է «հայ պատրիոտիզմի լավագույն մանիֆեստներից մեկը»։

Պրոֆ. Վ. Պարսամյանը և Մ. Ներսիսյանը մեթոդոլոգիական քաղաքական առավել լուրջ սխալներ են թույլ տվել 19-րդ դարի հայ հասարակական հոսանքների, ազգային ազատագրական շարժումների գնահատման գործում։

Պրոֆ. Վ. Պարսամյանն իր «Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում» աշխատության մեջ, ըստ արժանվույն չգնահատելով բախտորոշ այն խոշոր նշանակությունը, որ ունեցավ Հայաստանի միացումը Ռուսաստանին, փոխանակ հիմնավորելու այն իրական փաստը, որ հայ աշխատավոր ժողովրդի միակ փրկությունը Ռուսաստանին միանալն էր, բավարարվում է միայն նշելով, որ «Ցարական Ռուսաստանի իշխանության տակ լինելն անհամեմատ ավելի ձեռնտու և պակաս կորուստների հետ էր կապված հայ ժողովրդի համար, քան պարսկական և թյուրքական դեսպոտիզմի լծի տակ մնալը»։ Եվ հենց դրանով էլ «դա իր ժամանակին չարիքներից փոքրագույնն էր հայ ժողովրդի համար»։

Պրոֆ. Պարսամյանը Հայաստանի միացումը Ռուսաստանին դիտելով որպես նվաճում, չի տեսնում այդ միացման պրոգրեսիվ խոշոր նշանակությունը։ Նա ցարիզմի քաղաքականությունը համեմատում է անգլիացիների նվաճողական քաղաքականության հետ Հնդկաստանում։

Իր «Հայկական հարցի զարգացման պատմական ուղիները մինչև Բեռլինի կոնգրեսը» հոդվածում պրոֆ. Վ. Պարսամյանը ըստ էության հավասարության նշան է դնում հայ լիբերալ և դեմոկրատ գործիչների միջև։

Պրոֆ. Մ. Ներսիսյանը իր «Անդրկովկասի նարոդնիկական կազմակերպությունները 1870—1880 թթ.» գրքում (1940) և «Հայ ազգային ազատագրական շարժումը 1850—1880 թթ.» դիսերտացիոն աշխատությունում թույլ է տվել լուրջ սխալներ, նույնպես տուրք տալով «միասնական հոսանքի» բուրժուա-նացիոնալիստական թեորիայի վնասակար կոնցեպցիային։

Նա չկարողանալով լիովին հաղթահարել բուրժուական պատմագրության տրադիցիաները, և անհրաժեշտ խորությամբ բացահայտել հայ ազգային ազատագրական շարժման սոցիալ-դասակարգային հիմքերը, իր աշխատություններում այդ շարժումները համարել է գյուղացիական, հակաֆեոդալական, դեմոկրատական, մինչդեռ դրանք իրենց խնդիրներով ու բնույթով եղել են բուրժուական։

Ազգային ազատագրական շարժումների նման սխալ գնահատականը նրան հանգեցրել է նաև այդ շարժման բուրժուա-նացիոնալիստական դաղափարախոսների սխալ գնահատմանը։ Այսպես, օրինակ, նա, փոխանակ մերկացնելու Ռ. Պատկանյանի և Բաֆֆու նացիոնալիզմի ռեակցիոն էությունը, նրանց համարել է պրոգրեսիվ, դեմոկրատ գրողներ։ Նա իրրև դեմոկրատներ և դեմոկրատական խմբակներ է, ներկայացրել մի շարք նարոդնիկների և նարոդնիկական խմբակների։

Բուրժուա-նացիոնալիստական «միասնական հոսանքի» կոնցեպցիայի որոշակի արտահայտությունը մենք տեսնում ենք պրոֆ. Ա. Տերտերյանի ստեղծագործություններում։ Պրոֆ. Տերտերյանը, անտեսելով դրականության պարտիականության, մի ազգության մեջ երկու ազգային կուլտուրա տեսնելու

յենինյան հայտնի դրույթները, 19-րդ դարի հայ ամբողջ գրականությունը ներկայացնում է որպես «հայրենասիրական», «դեմոկրատական» գրականություն, զուգահեռներ անցկացնելով Նալբանդյանի ու Ալիշանի, Ալիշանի ու Աղայանի, Պարոնյանի ու Օտյանի, Շիրվանզադեի ու Հ. Հակոբյանի միջև։

Գաղափարական լուրջ սխալներ կան «Հայ գրականության պատմության» դասագրքի (խմբագիրներ Մ. Մկրյան, Հ. Մելիքյան, Է. Թոփչյան) ոչ միայն այն հատվածում, որը սուր քննադատության ենթարկվեց ՀԿՊ-ի 16-րդ համագումարում, «Պրավդա»-յում և «Կոմունիստ» ժուռնալում, այլև մյուս գլուխներում, մասնավորապես Ռ. Պատկանյանին և Րաֆֆուն նվիրված գլուխներում, որտեղ ըստ էության չի բացահայտված այդ հեղինակների բուրժուական նացիոնալիզմի էությունը։

«Միասնական հոսանքի» կոնցեպցիայի ազդեցությունը մենք նկատում ենք որոշ տնտեսագետների աշխատություններում։ Այսպես, տնտեսական գիտությունների թեկնածու ընկ. Ս. Զուրաբյանի «Հայ տնտեսագիտական մտքի պատմությունից» աշխատությունը, որ տպագրված է Ա. Ա. Ժդանովի անվան ռուսական Մանկավարժական ինստիտուտի՝ «Գիտական տեղեկագրի» 2-րդ գրքում, կան գաղափարական լուրջ սխալներ։ Չկարողանալով հաղթահարել դեռևս 1949 թ. տնտեսագիտության սեկտորի աշխատությունների ժողովածուում՝ բուրժուական տնտեստգիտության գնահատման հարցում իր թույլ տված մեթոդոլոգիական սխալները, ընկ. Ս. Զուրաբյանը իր այս նոր հոդվածում կրկնում է նման սխալները, լիբերալ Արասխանյանի տնտեսագիտական հայացքները կապելով մարքսիզմի հետ։

Գաղափարական նման սխալներ կան ընկ. Օ. Հովհաննիսյանի «Ագրարային հարցը Երևանի նախկին նահանգում» գրքում (1949), որտեղ հեղինակը զարգացնում է այն միտքը, թե 19-րդ դարի 70-ական թվականների գյուղացիական ռեֆորմի հետևանքով Երևանի նահանգի գյուղատնտեսությունը դեգրադացիայի էր ենթարկվել։ Ընկ. Հովհաննիսյանը մեղանչում է պատմական իրականության դեմ, երբ գրում է, որ իբր թե մինչև Անդրկովկասի միացումը Ռուսաստանին, Անդրկովկասը առևտրական կապերով կապված էր միայն Արևմտյան Եվրոպայի հետ։

Տեսական ցածր մակարդակով է գրված և մի շարք անճշտություններ է պարունակում ընկ. Ա. Մարուխյանի «Մեծ ավանդ մարքսիզմ-լենինիզմի զանձարանում» հոդվածը, տպագրված մեր «Տեղեկագրի» 1952 թ. № 11-ում։ Այդ հոդվածում հեղինակը շփոթել է ժամանակակից կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքը շահույթի օրենքի հետ, սուբյեկտիվիստական դիրքերից է բացատրել քաղաքականության և էկոնոմիկայի փոխհարաբերությունը։

Ո՞րոնք են վերոհիշյալ լուրջ թերությունների իդեական արմատները։ Այդ թերությունները ամենից առաջ արդյունք են մեր կադրերի գաղափարական քաղաքական ցածր մակարդակի, որին երբեմն զուգակցվում է փաստական նյութի անբավարար իմացությունը և մղում է Լենոյի կամ ուրիշ երկրորդական աղբյուրների անքննադատ օգտագործմանը։ Հայագիտությամբ զբաղվող գիտնականներից մի քանիսը, չեն կարողանում հայ ժողովրդի պատմության և գրականության հիմնական հարցերը լուծել մարքս-լենինյան առաջավոր թեորիայի դրույթներով, մարքսիզմի կիրառումը այդ ստեղծագործությունների մեջ օրգանապես չի կապվում նրանց բովանդակության հետ։

Այդ գիտնականների մոտ գերակշռում է տիրացուականությունը, թալմուդիզմը։ Անբավարար յուրացնելով փաստական նյութը, հայ ժողովրդի պատմության և գրականության հարցերի մարքսիստական անալիզը տալու հավակնություն ունեցող, բայց մարքսիզմով թույլ զինված այդ մարդիկ տուրք են տալիս բուրժուա-նացիոնալիստական վնասակար տեսություններին, պատմական երևույթները բացատրում են իդեալիստական դիրքերից։

Սովետական գիտությունը ամենաառաջավոր գիտությունն է։ Մեզ մոտ չկա գիտության այնպիսի բնագավառ, որը սոսկ արձանագրի փաստերը, իր ակտիվ վերաբերմունքը չցուցաբերի այդ փաստերի նկատմամբ, չբացահայտի նրանց խորը դասակարգային բովանդակությունը։ Դիտական այն աշխատությունները, որոնք չեն բարձրացնում մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության, սովետական հայրենասիրության վեհ գաղափարները, որոնք չեն կանգնում սովետական առաջավոր գիտության մակարդակի վրա, անխուսափելիորեն դատապարտված են անհաջողության։ Պարտիական խորը սկզբունքայնությունը, անհաշտ վերաբերմունքը թշնամական իդեոլոգիայի ամեն մի դրսևորման դեմ, մարտնչող մատերիալիզմի դիրքերից հասարակական երևույթների գիտական գնահատումն ու մեկնաբանումը, լինի այդ նոր շրջանին վերաբերող հարց, թե հնագույն շրջանին, առաջին և հիմնական նախապայմաններ են ամեն մի գիտական ուսումնասիրության։ Պետք է վերջ տալ բուրժուական օբյեկտիվիզմին, անսկզբունքայնությանը, փոխադարձ ներումներին ու սխալների սքողմանը։ Պետք է միշտ հիշել, որքան ավելի մեծ են մեր հաջողությունները, այնքան ավելի դազաղում է թշնամին և օգտագործում ամեն մի սողանցք՝ ներթափանցելու սովետական իդեոլոգիայի մեջ։ Գաղափարական պայքարը թերագնահատող մարդիկ կամա թե ակամա տուրք են տալիս թշնամական իդեոլոգիային, հող են ստեղծում նրա աշխուժացման համար։

Հասարակական գիտությունների բնագավառում տեղ գտած գաղափարական սխալների պատճառներից մեկն էլ գիտական օգնող քննադատության անբավարար վիճակն է, այն նեխած լիբերալ վերաբերմունքը, որ գոյություն է ունեցել առանձին գիտական հիմնարկներում, ինչպես գրականության և պատմության ինստիտուտներում, որտեղ միանգամայն անբավարար է ծավալված եղել քննադատությունը, որտեղ, ինչպես ճիշտ կերպով նշել է «Պրավդա»-ն, «գոյություն ունեն խորթ բարքեր, փոխադարձ երաշխավորություն, սխալների փոխադարձ ներում»։ Այդ ինստիտուտներում փոխանակ դիտխորհրդի և սեկտորների նիստերում հանգամանորեն քննության առնելու անտիպ գիտական աշխատությունները և բացահայտելու դրանց մեջ եղած թշնամական իդեոլոգիայի արտահայտությունները, քաղաքական այնպիսի կուրություն են հանդես բերել, որ միանգամայն դրական կարծիք են տվել բուրժուա-նացիոնալիստական, սպեցիֆիկյան կոնցեպցիայով գրված աշխատություններին։

Այդպիսի նեխած լիբերալիզմ է ցուցաբերվել, օրինակ՝ Աշ. Հովհաննիսյանի «Մ. Նալբանդյանը և իր ժամանակը» նացիոնալիստական աշխատության նկատմամբ, որին գրականագետներից ոմանք դրական գնահատական են տվել։

Նույնպիսի անպատասխանատու վերաբերմունք են հանդես բերել որոշ պատմաբաններ, Աշ. Հովհաննիսյանի «Իսրայել Օրին և նրա նախորդները» աշխատությանը տալով դրական գնահատական։

Թշնամական իդեոլոգիայի դեմ նպատակասլաց պայքարելու նախապայմաններից մեկը այդ գաղափարախոսության արտահայտությունների հայտ-

նաբերումն ու լիկվիդացումն է, իսկ այդ անհնար է առանց դիտական, ստեղծագործական քննադատության և ինքնաքննադատության լայն ծավալման, առանց գիտական լայն դիսկուսիաների կազմակերպման։

Հայկական ՍՍՌ ԳԱ Հասարակական գիտ. բաժանմունքի կողմից վերջին ամիսների ընթացքում կազմակերպված դիսկուսիաները ցույց տվեցին, թե որքան թույլ է ծավալված մեզ մոտ գիտական քննադատությունը։ Այդ դիսկուսիաներից առաջինն ու երկրորդը (զեկուցողներ Աբ. Հովհաննիսյան, Մ. Մկրտչյան), ընդհանուր առմամբ անցան տեսական ցածր մակարդակով, ընդգրկեցին վիճելի հարցերի շատ նեղ շրջանակ, իսկ երրորդ դիսկուսիան, նվիրված 19-րդ դարի 50—80-ական թվականների հայ ազգային ազատագրական շարժումներին, փաստորեն տապալվեց՝ զեկուցող պրոֆ. Մ. Ներսիսյանի միանգամայն անպատասխանատու վերաբերմունքի հետևանքով։ Այդ դիսկուսիայում պատմաբանները, գրականագետները, փիլիսոփաները, տնտեսագետները խուսափեցին քննադատությունից և ինքնաքննադատությունից։

Անբավարար է ուսումնասիրվում հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի պատմությունը, մասնավորապես սովետական շրջանի պատմությունն ու գրականությունը, որոնց մասին չունենք արժեքավոր որևէ մոնոգրաֆիա կամ ձեռնարկ։ Ակադեմիայի Պատմության և Գրականության ինստիտուտների առաջնահերթ խնդիրն է ստեղծել գիտական ուսումնասիրություններ, նվիրված հայ ժողովրդի սովետական շրջանի պատմությանն ու գրականությանը։

Սովետահայ պատմագրության, գրականագիտության, տնտեսագիտության բնագավառում տեղ գտած գաղափարական սխալների բացահայտման ու լիկվիդացման, սովետական առաջավոր իդեոլոգիայի պրոպագանդայի գործում խոշոր դեր ունի կատարելու Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր»-ը (Հասարակական գիտություններ)։

Մինչդեռ «Տեղեկագիր»-ը իր էջերում ոչ միայն չի կարողացել ժամանակին բացահայտել ու մերկացնել նման սխալները, այլ ընդհակառակը 1951 թ. հրատարակել է պրոֆ. Վ. Զալոյանի արատավոր հոդվածը։ «Տեղեկագիր»-ը հրատարակել է հոդվածներ, որոնք պարունակում են գաղափարական սխալներ, անճիշտ ձևակերպումներ։

«Տեղեկագիր»-ը չի կարողացել նախաձեռնություն հանդես բերել և իր էջերում ծավալել գիտական լայն քննադատություն։ Դեպքից դեպք են միայն տպագրվել գրախոսություններ, այն էլ հաճախ ոչ բնորոշ աշխատությունների մասին։

ՍՄԿՊ-ի 19-րդ համագումարից հետո «Տեղեկագիր»-ը չկարողացավ անմիջապես վերակառուցել իր աշխատանքը և դառնալ թշնամական իդեոլոգիայի դեմ մղվող պայքարի առաջատար ջոկատներից մեկը։ Այդ է վկայում այն փաստը, որ «Տեղեկագրի» 1952 թ. № № 11-ում և 12-ում չտպագրվեց ոչ մի աշխատություն, որը արձագանքեր այդ ամիսներին գիտական հասարակությանը հուզող հարցերին, կապված իդեոլոգիական բնագավառում տեղ գտած սխալների բացահայտման հետ։

Այս բոլորը վկայում են «Տեղեկագրի» խմբագրական կոլեգիայի միանգամայն անբավարար աշխատանքի մասին։

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի 19-րդ համագումարի պատմական որոշումները, Ի. Վ. Ստալինի ծրագրային ճառը համագումարում, ընկեր Ստալինի «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում»-

հանճարեղ աշխատությունը իդեոլոգիայի բնագավառի աշխատողների համար հանդիսանում են գաղափարական հզոր զենք։ Ընկեր Ստալինի «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատությունը հանճարեղորեն բացահայտելով սոցիալիզմի զարգացման տնտեսական օրենքներն ու օրինաչափությունները, ինչպես և կապիտալիստական հասարակության հիմնական տնտեսական օրենքը, նոր ուղիներ է բաց անում հասարակական գիտությունների զարգացման առաջ և սովետական գիտնականներին մղում է ստեղծագործական նոր նվաճումների։

Զինված մարքս-լենինյան հզոր գիտությամբ՝ անհրաժեշտ է է՛լ ավելի ծավալել և նպատակասլաց դուրս բերել պայքարը թշնամական իդեոլոգիայի ամեն մի դրսևորման դեմ, բուրժուա-նացիոնալիստական այսպես կոչված «միասնական հոսանքի» վնասակար կոնցեպցիայի ամեն մի արտահայտության դեմ։